



Հայաստանի բյուջետային վերլուծությունների ծրագիր



Սղաճը և դրա սոցիալական ազդեցությունը Հայաստանում

Ապրիլ 2004, Երևան

«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ

Սղաճը և դրա սոցիալական ազդեցությունը Հայաստանում

Արթուր Նախշիկյան

«Հայաստանի բյուջետային վերլուծությունների» ծրագիր

Ապրիլ 2004, Երևան

Սղահը և դրա սոցիալական ազդեցությունը Հայաստանում

Նախաբան.....	3
Գները Հայաստանում 1998-2003 թվականներին	4
Սղահը և աշխատավարձը բնակչության տարբեր սոցիալական խմբերում.....	13
Եզրափակում.....	19
Հավելված 1.	20
Հավելված 2. «Հացի խնդիրը»	22

Նախաբան

Տնտեսությունում գների ընդհանուր մակարդակի աճը՝ սղաճը, վերջերս հիմնականում քննարկվում է որպես մակրոտնտեսական երևույթ՝ տնտեսության զարգացման վրա ազդեցության և մակրոտնտեսական շրջանակի մշակման համատեքստում: Մինչդեռ, հասկանալի է, որ սղաճն ունի նաև խիստ կարևոր սոցիալական նշանակություն: Հատկապես աղքատության հաղթահարման խնդրի ներքո էլ ավելի է կարևորվում սղաճի «աղքատության և սոցիալական ոլորտի վրա ազդեցության գնահատականը»¹: Չնայած վերջին տարիներին արձանագրվող սպառողական գների ցածր աճին, անհրաժեշտություն կա գնահատել, թե ինչպիսի դրսևորում է ունեցել սղաճը ոչ միայն տնտեսության առանձին հատվածներում, այլև բնակչության առանձին եկամտային խմբերում:

Վերջինս մասնավորապես վերաբերվում է այն հարցին թե որքանով է սղաճը հարթ բոլոր տնային տնտեսությունների համար, այսինքն, արդյո՞ք աղքատների սպառողական ծախսերի գների մակարդակի աճն ավելի բարձր է, քան հարուստներինը:

Բնակչության տարբեր սոցիալական (եկամտային) խմբերում տարբեր է սպառողական ծախսերի կառուցվածքը և, եթե տնտեսության համար սղաճը հաշվարկելիս դիտարկվում է մեկ սպառողական զամբյուղ, ապա յուրաքանչյուր եկամտային խումբ ունի իր սպառողական զամբյուղը, հետևաբար և՛ սղաճը: Չնայած տնտեսական զարգացմանը, և դրա արդյունքում երկրում վճարվող աշխատավարձերի ընդհանուր մակարդակի հնարավոր աճին՝ այնուամենայնիվ տնային տնտեսությունների բարեկեցության աճը և աղքատության կրճատումը կպայմանավորվի աշխատավարձերի բաշխման հարթությամբ:

ՀՀ ԱՎԾ 1998-2002 թվականների տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանձին եկամտային խմբերում տնային տնտեսությունների համար սղաճի և իրական աշխատավարձերի բաշխումը խիստ տարբեր է, որի

¹ PSIA

արդյունքում Հայաստանում ավելի է սրվում սոցիալական անհավասարությունը: Վերջին վեց տարիներին առավելապես թանկացել են առաջին անհրաժեշտության ապրանքները: Միայն 2003 թվականին արտաքին գործոնով պայմանավորված հացամթերքի թանկացման պատճառով, չնայած ամբողջ տնտեսության համար 8.6 տոկոս սղաճին, բնակչության ամենահարուստ դեցիլային խմբում սղաճը կազմել է ընդամենը 6 տոկոս, իսկ ամենաաղքատ դեցիլային խմբի մոտ՝ շուրջ 25 տոկոս:

Գները Հայաստանում 1998-2003 թվականներին

Հետազոտության այս բաժնում ներկայացվում է վերջին հինգ տարիներին գների ընդհանուր միտումների վերլուծությունը՝ նպատակ ունենալով ընդհանուր առմամբ պատասխանել այն հարցին, թե ո՞ր ապրանքների հաշվին և ո՞ր գործոններն են առավելապես պայմանավորել 1998-2003 թվականներին գրանցված շուրջ 15.3 տոկոս սղաճը:


Համաձայն ստացված արդյունքների վերջին հինգ տարիներին Հայաստանը ներմուծել է մոտ 3 տոկոս սղաճ (բացառությամբ 2003 թվականին հացամթերքների գների թանկացման): Չնայած այն հանգամանքին, որ ներմուծված ապրանքների գները շատ չեն փոփոխվել, այնուամենայնիվ 2003 թվականին արձանագրված հացամթերքների գների աճի փաստը թույլ է տալիս եզրակացնել, որ արտաքին գնային շուկերից տնտեսության խոցելիությունը բարձր է: Վերլուծությունը թույլ է տալիս նաև եզրակացնել, որ 1998-2003 թվականների սղաճը հիմնականում տեղի է ունեցել առաջին անհրաժեշտության ապրանքների գների թանկացման հաշվին և գլխավորապես կրել է պետական սակագնային քաղաքականության ազդեցությունը:

Հայաստանում շուկայական համակարգին անցման առաջին փուլի առավել հատկանշական մակրոտնտեսական երևույթը թերևս հիպերսղաճն էր, որը շարունակվեց մինչև 1994 թվականը²: Կայուն մակրոտնտեսական իրավիճակի ապահովմանը միտված մակրոտնտեսական քաղաքականության արդյունքում, որը սկզբնավորվեց 1995 թվա-

² **Cagan P**, The Monetary Dynamics of Hyperinflation, University of Chicago Press, Chicago, 1956, էջ 25: Սղաճի չափազանց բարձր տեմպը կոչվում է հիպերսղաճ: Այս աշխատության մեջ վերլուծված են 1920-1946 թվականների ընթացքում գրանցված ութ հիպերսղաճներից յոթը: Հեղինակը հիպերսղաճի սկիզբ է համարում այն ամիսը, որի ընթացքում, առաջին անգամ, սղաճը գերազանցել է 50 տոկոսը և վերջ է համարում այն ամիսը, որին հաջորդող ամսվա ընթացքում սղաճն արդեն ցածր է 50 տոկոսից, որն էլ շարունակվում է ոչ պակաս, քան մեկ տարի: 1994 թվականի հունիսին Հայաստանում գրանցվեց 9.1 տոկոս սղաճ՝ մայիսի 56 տոկոսի դիմաց և 50 տոկոսից բարձր մակարդակ այլևս չարձանագրվեց:

կանին, հաջողվեց կանխել գների աճի բարձր տեմպը: Այնուհետև, հաջորդող տարիներին և առ այսօր, դրամավարկային քաղաքականության գերխնդիրը դարձավ գների կայունության ապահովումը³: 1998 թվականից ի վեր, երբ տնտեսությունում ձևավորվեց որոշակի կայուն մակրոտնտեսական իրավիճակ, սղաճի վարքագիծն առավելապես կենտրոնացավ նախընտրելի ցածր՝ տարեկան 0-2 տոկոսի շուրջ (տե՛ս գծապատկեր 1 և 2):

Գծապատկեր 1. Սղաճը տարվա վերջի դրությամբ 1995-2003 թվականներին




Եթե մինչև 1998 թվականն ակնհայտ էր ընդհանուր գների աճի տեմպերի նվազումն, ապա 1998 թվականից, արդեն որոշակի կայուն մակրոտնտեսական գնային դաշտում, առավել ընդգծվեցին տարբեր ապրանքախմբերի գների միտումները և դրանց տարբերությունները: Տարբեր ապրանքախմբերում արձանագրված գների միտումների տարբերությունները պայմանավորվեցին կոնկրետ ապրանքային շուկայում գնազոյացման առանձնահատկություններով, այդ շուկային հատուկ գնային գործոններով, որոնցից յուրաքանչյուրի ազդեցությունը տվյալ ապրանք-

³ Տե՛ս «ՀՀ ԿԲ մասին օրենքի» ՀՀ օրենքը:


քային շուկայում, ընդհանուր կայուն մակրոտնտեսական իրավիճակում, ձեռք բերեց առավել նշանակություն:

Գծապատկեր 2. Ամսեկան սղաճը 1995-2003 թվականներին



Այս պարագայում առավել դետալացված վերլուծություն իրականացնելու նպատակով մեր կողմից սպառողական զամբյուղը, որի հիման վրա հաշվարկվում է սղաճը, բաժանվել է ինն ապրանքախմբի՝ ըստ իրենց գնագոյացման առանձնահատկությունների և ուսումնասիրվել է յուրաքանչյուր ապրանքախմբի գների վարքագիծը (տե՛ս գծապատկեր 3 և 4):

Գծապատկերներ 3 – 4. Առանձին ապրանքախմբերի գների ինդեքսները 1998-2003 թթ



Այժմ անդրադառնանք յուրաքանչյուր ապրանքախմբին առանձին:

Գյուղատնտեսական մթերքների գները, ինչպես և պետք էր ակնկալել, ամենատատանողական վարքագիծն են դրսևորել, որոնց կշիռը ՍԳԻ զամբյուղում 2003 թվականին կազմել է 22.4 տոկոս⁴: Գյուղատնտեսական մթերքների գների համար ամենակարևոր գործոնը, կարճաժամկետ հատվածում, բնակլիմայական գործոնով պայմանավորված առաջարկի տատանումներն են: Համաձայն կատարված հետազոտությունների՝ կարճաժամկետ հատվածում պահանջարկը բնութագրող փոփոխականների նկատմամբ այս ապրանքախմբի գները զգայուն չեն, միջին ժամկետ հատվածում որոշակի նշանակություն է ստանում եկամուտների մակարդակը⁵: Չնայած, որ վերջին երեք տարիներին դրանք դրսևորել են կայուն աճի միտում, այնուամենայնիվ, շարունակում են մնալ հարաբերականորեն ցածր մակարդակի վրա. 1998-2003 թվականների ընթացքում այս ապրանքախմբի գներն աճել են 11.4 տոկոսով, իսկ մասնակցությունը սղաճին մոտ 3 տոկոսային կետ է:

Հացամթերքի կշիռը ՍԳԻ զամբյուղում կազմում է 16 տոկոս⁶: Մինչև 2003 թվականի կեսերը հացամթերքի գները ցուցաբերել են կայուն նվազման միտում (որն ամենայն հավանականությամբ ներքին շուկայում մրցակցության հետևանք է), այնուհետև արձանագրվեց կտրուկ աճ (որի պատճառները և հետևանքներն առավել մանրամասն կներկայացվեն): Նշենք միայն, որ 1998-2003 թվականների ընթացքում գրանցված 15.3 տոկոս սղաճին ամենամեծ մասնակցությունն ունեցել է այս ապրանքախումբը՝ շուրջ 4.6 տոկոսային կետ:

Ծառայությունների գներն, որոնց բաժին է ընկնում ՍԳԻ զամբյուղի տասներորդ մասը, դրսևորում են կայուն և, ընդհանուր առմամբ, ՍԳԻ վարքագծին գրեթե համընկնող միտումներ: Այսպես, եթե 1998-2003 թվականներին միջին հաշվով յուրաքանչյուր տարի արձանագրվել է 2.4 տոկոս սղաճ, ապա ծառայությունների գները նույն ժամանա-

⁴ Խմբում ներառված են ՍԳԻ զամբյուղում առկա բոլոր 39 տեսակի գյուղմթերքները:

⁵ Տե՛ս Ա.Նախշիկյան, Ա. Թևոսյան, «Գյուղատնտեսական մթերքների գնազդայցման մոդելավորում», ՀՀ ԿԲ 2003թ. Բանբեր, երրորդ եռամսյակ, էջ 132:

⁶ Խմբում ներառված են սպառողական զամբյուղի կազմի մեջ մտնող հացամթերքի տեսակները, մասնավորապես այլուրի և հացի բոլոր տեսակները և այլուրից պատրաստված այլ ապրանքները:

կահատվածում յուրաքանչյուր տարի միջին հաշվով աճել են 2.8 տոկոսով: Այս խմբում ընդգրկված են բոլոր ծառայությունները՝ բացառությամբ պետության կողմից կարգավորվող ծառայությունների: Ծառայությունների ոլորտն ընդհանուր առմամբ կարելի է համարել մրցակցային⁷, և այստեղ աշխատավարձերը, հետևաբար և ճյուղի գները, ճշգրտվում են տնտեսությունում ձևավորված ընդհանուր գների համապատասխան:

Պետության կողմից կարգավորվող գների ապրանքախմբի կշիռը ՍԳԻ զամբյուղում կազմում է 9 տոկոս և այն, որ այս ապրանքախմբի գներն առանձնանում են իրենց վարքագծով, օրինաչափ երևույթ է: Ինչպես երևում է, այս ապրանքախմբի գներում կտրուկ աճ է արձանագրվել 1999 թվականին, որը հիմնականում պայմանավորված է եղել որոշ սակագների բարձրացմամբ: Հատկանշական է, որ այս ապրանքախմբի գների կուտակային աճը 1998 թվականից մինչև 2003 թվականի սեպտեմբերը զիջել է միայն ծխախոտի գներին: Դիտարկվող ժամանակահատվածում պետական կարգավորվող գներն աճել են 36.5 տոկոսով, իսկ սղաճին ցուցաբերած մասնակցությամբ զիջում են միայն հացամթերքի գներին՝ կազմելով 3.4 տոկոսային կետ:

Ծխախոտի (ներքին արտադրության), որպես առանձին ապրանքախմբի, դիտարկման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս ապրանքատեսակի գները վերջին տարիներին էապես կրել են ակցիզային հարկի ազդեցությունը (մասնավորապես՝ 1999 թվականի չորրորդ եռամսյակի կտրուկ աճը և 2002 թվականի առաջին կեսի անկումը): Բացի այդ, վերջին երկու տարիներին այս շուկայում տեղի է ունեցել շուկայական մասնաբաժինների վերաբաշխում, որը հանգեցրել է համեմատաբար հաստատուն գների մակարդակի պահպանմանը⁸: Միևնույն ժամանակ նշենք, որ այս ապրանքատեսակի կշիռը ՍԳԻ զամբյուղում կազմում է 5 տոկոս: Այնուհանդերձ, ծխախոտի գների

⁷ Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների, ծառայություններ մատուցող տնտեսավարողների թիվը հասնում է 20000-ի (առանց անհատ ձեռներեցների), որոնք կազմում են ընդհանուրի 42 տոկոսը: Այսինքն, ոլորտում ներգրավվածների քանակի տեսանկյունից ճյուղը բավարարում է մրցակցության պայմաններին:

⁸ Շուկայում տեղի ունեցած կառուցվածքային տեղաշարժերը հավաստող պաշտոնական տեղեկատվության չենք տնօրինում: Պնդումը հիմնված է փորձագիտական դիտարկման վրա և մեր կարծիքով հիմնավորվում է նոր խոշոր ներքին արտադրողի գործունեությամբ:

կուտակային աճը 1998-2003 թվականներին դիտարկված ապրանքա-
խմբերից առավելագույնն է՝ 50 տոկոս:

Գները կենտրոնացված շուկաներում

Կենտրոնացված կամ կոնցենտրացված են համարվում այն շուկաները, որտեղ ձեռնարկություններից մեկին պատկանում է շուկայի գերակշիռ մասը՝ 50 տոկոս և ավելին, իսկ մյուսներն ունեն միմյանց մոտ մասնաբաժիններ: Այս շուկաներում գների վարքագիծը հիմնականում որոշվում է շուկայում գերիշխող մասնաբաժին ունեցող ձեռնարկության վարքագծով: Ունենալով շուկայական ուժ (market power)՝ վերջինս գները կարգավորում է բավականին ճկուն՝ հատկապես աճի ուղղությամբ: Արդյունքում, ճյուղի գներն ածանցվում են գերիշխողի գնից: Սովորաբար ճյուղի «լիդերը» գները սահմանում է հավելադրի սկզբունքով՝ հաշվի է առնում ծախսերը և սահմանում հավելադիր, որի մեծությունը կախված է իր իսկ պահանջարկի առաձգականությունից⁹:

Կոնցենտրացված շուկաների ապրանքների գները դիտարկվող ժամանակահատվածում կայուն աճի միտում են ցուցաբերում: Այս խմբում ներառվել են կոնյակը, գինին և գարեջուրը, որոնց գները ցուցաբերում են աճի միտում: Ընդ որում, 2003 թվականի վերջին արձանագրված կտրուկ աճը համընկնում է հացամթերքների գների աճի հետ: Սակայն այս ապրանքախմբի ընդհանուր կշիռը ՍԳԻ զամբյուղում բավականին փոքր է՝ մոտ 1 տոկոս¹⁰:

Ներմուծվող ապրանքների գները

Ներմուծված ապրանքները (բացառությամբ հացահատիկից), որոնց կշիռը ՍԳԻ զամբյուղում առավելագույնն է՝ 29 տոկոս, դիտարկվում են առանձին, քանի որ դրանց գնագոյացումն առավելապես պայմանավորված է համաշխարհային շուկաներում տեղի ունեցող զարգացումներով և

⁹ Տե՛ս Ա. Թևոսյան, Ա.Նախշիկյան, «Գնագոյացումը սննդի արդյունաբերությունում», ՀՀ ԿԲ 2004թ. Բանբեր, առաջին եռամսյակ, էջ 132:

¹⁰ Ըստ ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովի տվյալների (2001 թվականի տարեկան գործունեության հաշվետվություն), սննդի արդյունաբերությունում առկա են գնային լիդերներ, հատկապես կոնցենտրացված է ոգելից խմիչքների արտադրությունը: Մասնավորապես, կոնյակի արտադրությունում մեկ ձեռնարկության պատկանում է շուկայի 84%-ը, իսկ մնացած 16% պահանջարկը բավարարում են թվով 17 ձեռնարկություններ: Գարեջրի իրացման ընդհանուր ծավալների 75%-ը պատկանում է մեկ, իսկ մնացածը՝ թվով 5 ձեռնարկությունների: Գինու ապրանքային շուկայում պահանջարկի 70%-ը բավարարում է մեկ, իսկ մնացածը՝ 6 ձեռնարկություն:

Հայաստանի, որպես փոքր և ներմուծող երկրի, համար այդ գներն ընդհանուր առմամբ տրված մեծություններ են: Եվ ինչպես պատկերված է գծապատկեր 4-ում, ներմուծման գները վերջին տարիներին դրսևորել են կայուն վարքագիծ: Կուտակային սղաճը 1998-2003 թվականներին կազմել է ընդամենը 3.1 տոկոս: Փաստորեն, վերջին հինգ տարիներին Հայաստանը գրեթե սղաճ չի ներմուծել (բացառությամբ 2003 թվականին հացամթերքների գների թանկացումը):

Գները չկենտրոնացված շուկաներում

Հաջորդ ապրանքախմբում ներառված են, այսպես կոչված, չկենտրոնացված կամ չկոնցենտրացված շուկաներում՝ (փոքրաթիվ ձեռնարկություններով շուկաներ) արտադրվող ապրանքները: Չկոնցենտրացված շուկաներ ասելով հասկանում ենք, երբ շուկայում գործում են հավասար մասնաբաժիններ ունեցող քիչ քանակությամբ ձեռնարկություններ: Ի տարբերություն կոնցենտրացված ճյուղերի, չկոնցենտրացված ճյուղերում գների ձևավորման հարցում բոլոր ձեռնարկություններն ունեն հավասար ազդեցություն: Այս ապրանքախմբի գները ցուցաբերում են ոչ ճկուն կամ համեմատաբար կայուն վարքագիծ: Հնարավոր են կտրուկ երկարաժամկետ ճշգրտումներ: Այդ երևույթը ձեռնարկությունների քիչ քանակության և վարքագծային հավասար հնարավորությունների պայմաններում պայմանավորված է յուրաքանչյուր ձեռնարկության համար իրավիճակի ոչ լրիվ կառավարելիությամբ և վերջիններիս միջև վարքագծային կախվածությամբ: Սա հանգեցնում է յուրաքանչյուր ձեռնարկության կողմից առաջինը սկսողի ռիսկից խուսափելու ձգտման, որը կարճաժամկետում գների ոչ ճկուն վարքագծի պատճառ է դառնում¹¹: Այս պարագայում արդեն տարօրինակ չէ, որ ապրանքախմբում ներառված սննդի արդյունաբերության որոշ արտադրատեսակների՝ մսամթերք, կաթնամթերք և պահածո, գները (որոնց ընդհանուր կշիռը ՍԳԻ-ում կազմում է մոտ 5 տոկոս) 1998-2003 թվականներին գրեթե չեն փոխվել:

Այլ ապրանքներ խմբում ներառված են այն ապրանքները, որոնք չեն դասվել վերը նշված որևէ ապրանքախմբում: Կազմում են ընդամենը 1 տոկոս և դրսևորում են կայուն վարքագիծ:

¹¹ Տե՛ս Ա. Թևոսյան, Ա.Նախշիկյան, «Գնագոյացումը սննդի արդյունաբերությունում», ՀՀ ԿԲ 2004թ. Բանբեր, առաջին եռամսյակ, էջ 132:

Ամփոփում

Հայաստանում 1998-2003 թվականներին գրանցվել է 15.3 տոկոս սղաճ, որը հիմնականում տեղի է ունեցել հացամթերքի գների՝ 4.6 տոկոսային կետ, պետության կողմից կարգավորվող գների՝ 3.4 տոկոսային կետ, գյուղատնտեսական մթերքների գների՝ 3.1 տոկոսային կետ և ներքին արտադրության ծխախոտի գների՝ մոտ 1.4 տոկոսային կետ մասնակցության հաշվին, որը ընդահնուր առմամբ ապահովել է սղաճի 12.5 տոկոսային կետը:

Փաստորեն, վերլուծությունը ցույց է տալիս, որ 1998-2003 թվականներին սղաճը հիմնականում տեղի է ունեցել այն ապրանքախմբերի հաշվին, որոնք համարվում են առաջին անհրաժեշտության: Սղաճը գլխավորապես կրել է պետական սակագնային և հարկային քաղաքականությունների ազդեցությունը. վերջին հինգ տարիների 15.3 տոկոս սղաճի 4.8 տոկոսային կետն ապահովվել է այս գործոնի հաշվին: Չնայած այն հանգամանքին, որ ներմուծված ապրանքների գները շատ չեն փոփոխվել, այնուամենայնիվ, 2003 թվականին արձանագրված հացամթերքների գների աճի փաստը թույլ է տալիս եզրակացնել, որ արտաքին գնային շոկերից Հայաստանի տնտեսության խոցելիությունը բարձր է:

Սղաճը և աշխատավարձը բնակչության տարբեր սոցիալական խմբերում

Հայաստանում 1998-2003 թվականներին սղաճը հիմնականում տեղի է ունեցել լայն սպառման և առաջին անհարաժեշտության ապրանքների գների աճի հաշվին: Հետևավաբար ելթադրվում է, որ դրանց գների աճն առավել էական է եղել բնակչության չունեվոր խավի համար: Այդ իսկ պատճառով հետազոտության այս մասում սոցիալական անհավասարության առավել ճիշտ պատկեր ստանալու նպատակով գնահատվել է սղաճի և աշխատավարձի բաշխումներն ըստ սոցիալական խմբերի: Համաձայն կատարված գնահատման սղաճի բաշխումը սրում է սոցիալական անհավասարությունը: Դեռ ավելին, դրան զուգահեռ անհավասարաչափ են բաշխվում նաև աշխատավարձերը:


Ինչպես տեսանք, ՍԳԻ գամբյուղում ներառված տարբեր ապրանքախմբերի գները վերջին տարիներին դրսևորել են տարբեր վարքագծեր: Այս փաստն ակամայից հանգեցնում է այն մտքին, որ սղաճը կարող է տարբերվել նաև բնակչության տարբեր սոցիալական խմբերում, քանի որ, կախված ծախսերի (եկամուտների) չափից, տարբերվում է սպառման կառուցվածքը: Այդ են վկայում 1998/1999, 2001 և 2002 թվականների տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքները (տե՛ս աղյուսակ 1)¹²:

Աղյուսակ 1-ից պարզ երևում է, որ համախառն ծախսերի (եկամուտի) աճին զուգահեռ նվազում են սննդամթերքի ու ծխախոտի կշիռները և հակառակը՝ աճում են ակոհոլի, ոչ սննդամթերքի և ծառայությունների կշիռները յուրաքանչյուր դեցիլային խմբի սպառողական գամբյուղում: Գծապատկեր 5-ում¹³ պատկերված են վերոնշյալ ապրանքախմբերի գների վարքագծերը 2001-2003 թվականներին:

¹² Տե՛ս «ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառումը 1999, 2001 և 2002 թթ» վիճակագրական ժողովածու էջ 82 աղյուսակ 8: 2003 թվականի համար դիտարկվել են 2002 թվականի կշիռները:

¹³ Տե՛ս ՀՀ ԱՎԾ «Սպառողական գների ինդեքսը ՀՀ վիճակագրական տեղեկագիր»:

Գծապատկեր 5. Առանձին ապրանքախմբերի գների կուտակային աճը




Ինչպես տեսնում ենք հիմնականում աճ է արձանագրվել սննդամթերքի և ալկոհոլի գներում, նվազել են ծխախոտի գները և հարաբերականորեն կայուն վարքագիծ են դրսևորել ծառայությունների և ոչ սննդի գները:

Օգտագործելով նշված ապրանքախմբերի գների¹³ և կշիռների¹² վերաբերյալ տեղեկատվությունը՝ հաշվարկվել է բնակչության յուրաքանչյուր դեցիլային խմբի սղաճը, որը ներկայացված է գծապատկեր 6-ում: Նման մոտեցմամբ սղաճի գնահատականը կարող է շեղվել պաշտոնական սղաճի ցուցանիշից, սակայն շեղումը նշանակալի չէ¹⁴:

¹⁴ Փաստացի պաշտոնական սղաճը 2001 և 2002 թվականներին համապատասխանաբար կազմել է 2.9 և 2 տոկոս (տարեվերջի դրությամբ), մեր կողմից ըստ դեցիլների գնահատված սղաճի գումարային տարեկան ցուցանիշը 2001-ի համար չի շեղվել պաշտոնականից, իսկ 2002-ի համար շեղումը կազմել է ընդամենը 0.3 տոկոսային կետ:

Գծապատկեր 6. Սղան ըստ դեցիլների



Ինչպես տեսնում ենք 2001 և 2003 թվականներին դեցիլի եկամտի աճին զուգահեռ սղանը նվազել է, իսկ 2002 թվականին ըստ դեցիլների հարաբերականորեն կայուն է բաշխվել: Այս հանգամանքը հիմնականում պայմանավորված է սննդամթերքի գների աճով, որի կշիռն ամենամեծն է բոլոր սոցիալական խմբերի մոտ, սակայն միևնույն ժամանակ էապես տարբերվում է բարձր և ցածր եկամուտ ունեցող խմբերի մոտ:

Փաստորեն այն տարիներին, երբ սղանը հարաբերականորեն բարձր է եղել, հիմնականում պայմանավորված սննդամթերքի գներով¹⁵, սղանի բաշխումն ըստ բնակչության եկամտային խմբերի ավելի անհավասարաչափ է եղել՝ ի վնաս աղքատների:

Ինչ վերաբերվում պետական սակագնային քաղաքականության ազդեցությանը սղանի բաշխման վրա, ապա աղյուսակ 1-ում ներկայացված բնակչության ծախսերի կառուցվածքն ուսումնասիրելուց դժվար չէ կռահել, որ այն նպաստել է սղանի անհավասարաչափ բաշխմանը: Մասնավորապես, նշված գործոնը հիմնականում պայմանավորել է ծխախոտի, էլեկտրա-

¹⁵ 2001 թվականին գրանցվել է 2.9 տոկոս սղան (տարեվերջի դրությամբ), որին սննդամթերքի մասնակցությունը կազմել է 2.4 տոկոսային կետ, իսկ 2003 թվականի 8.6 տոկոս սղանի սննդամթերքի մասնակցությունը կազմել է 7.9 տոկոսային կետ:

Էներգիայի գների թանկացում, որոնց կշիռը սպառողական ծախսերում ընդհանուր առմամբ հակառակ համեմատական է եկամտից:

Սակայն, կա մեկ հանգամանք, որը ներկայացված սղաճի բաշխումը առավել պայամանական է դարձնում: Դա այն ենթադրությունն է, որ կշված հինգ ապրանքախմբերում՝ սնունդ, ոչ սնունդ և այլ, տարբեր ապրանքատեսակներ և ծառայություններ նույն համամասնությամբ են սպառվում՝ անկախ եկամտի չափից: Օրինակ՝ ճիշտ կլինի ենթադրել, որ հացամթերքների կշիռը սննդամթերքում շատ ավելի մեծ է առաջին դեցիլի մոտ քան վերջինի: Սննդամթերքի թանկացումներից առավելագույնը գրանցվել է 2003 թվականին և առավելապես հացի գների թանկացման արդյունքում:


Հացամթերքի գների ազդեցությունը գնահատելու համար մենք կփորձենք գնահատել սղաճի մեկ այլ բաշխում՝ ըստ բնակչության սոցիալական խմբերի՝ սակայն արդեն յուրաքանչյուր խմբի համար գնահատելով իր կողմից հացամթերքների վրա ծախսվող գումարի կշիռը: Այդ նպատակով նախ հաշվարկվել են սննդամթերքի և հացամթերքի վրա կատարվող ծախսերը, հետևաբար և հացամթերքի կշիռը սննդամթերքում¹⁶: Արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում: Այնուհետև, յուրաքանչյուր ապրանքախմբի կշիռը բազմապատկելով համապատասխան գնով¹⁷, ստացվել է ըստ դեցիլների սղաճի բաշխման նոր տարբերակը (տե՛ս գծապատկեր 7):

Գծապատկեր 7-ից երևում է, որ 2003-ին սղաճը բաշխվել է ի վնաս աղքատների: Պաշտոնական 8.6 տոկոս սղաճի պայմաններում ամենահարուստ դեցիլի մոտ սղաճը կազմում է ընդամենը 6 տոկոս, մինչդեռ ամենաաղքատ խավի մոտ սղաճը հասնում է 25 տոկոսի: Ակնհայտ է դառնում հացամթերքների գների նշանակությունը:

¹⁶ Հաշվարկների համար օգտագործվել են 1998/1999, 2001 և 2002 թվականների տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքները, մասնավորապես, սպառողական ծախսերն ըստ դեցիլների (աղյուսակ 7, էջ 81), ծախսերի հիմնական հողվածների մասնաբաժինը տնային տնտեսությունների միջին ամսեկան սպառողական ծախսերի կառուցվածքում (աղյուսակ 8, էջ 82), հիմնական սննդամթերքների միջին ամսեկան սպառումն ըստ դեցիլների (աղյուսակ 5, էջ 95) և սննդամթերքների գնման միջին գները (աղյուսակ 6, էջ 99):

¹⁷ Տե՛ս ՀՀ ԱԿԾ «Սպառողական գների ինդեքսը ՀՀ վիճակագրական տեղեկագիր»:

Գծապատկեր 7. Սղաճն ըստ դեցիլների 2003 թվականին (հաշվի է առնված յուրաքանչյուր դեցիլի հացամթերքի սպառման կշիռը)



Աշխատավարձի բաշխումը

Փորձենք գնահատել 1999-2003 թվականներին աշխատավարձերի բաշխումն ըստ դեցիլների և համեմատելով այն սղաճի բաշխման հետ՝ եզրակացնենք բնակչության առանձին եկամտային խմբերում իրական աշխատավաճերի փոփոխության մասին:

Աշխատավարձի բաշխումն ըստ դեցիլների ստանալու համար նախ հաշվարկվել է յուրաքանչյուր դեցիլի եկամտի մասնաբաժինն ընդհանուր եկամտի մեջ¹⁸, այնուհետև համախառն տնօրինվող եկամուտը¹⁹ հարաբերվել է ստացված կշիռներին և հաշվարկվել յուրաքանչյուր դեցիլի համախառն տնօրինվող եկամուտը: Ստացված թվերը բազմապատկելով յուրաքանչյուր դեցիլի դրամական եկամուտներում աշխատանքի դիմաց

¹⁸ Տե՛ս «ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառումը 1999, 2001 և 2002թթ» վիճակագրական ժողովածու էջ 59 աղյուսակ 7: 2003 թվականի համար դիտարկվել են 2002 թվականի կշիռները:


¹⁹ Տե՛ս «ՀՀ 2004 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագիր» էջ 51 հավելված 2.3: 2003 թվականի համար դիտարկվել են 2002 թվականի կշիռները:

ստացված վճարների մասնաբաժնով²⁰ գնահատել ենք աշխատավարձի բաշխումն ըստ դեցիլների (տե՛ս գծապատկեր 8):

Բնականաբար, ինչպես և կարելի էր ակնկալել, աշխատավարձի բաշխումն ի տարբերություն սղաճի ունի հակառակ ուղղվածություն, սակայն քաղաքականության տեսանկյունից ուշադրության է արժանի մեկ այլ փաստ՝ աշխատավարձերի աճի տեմպերի համեմատությունն ըստ դեցիլների (տե՛ս աղյուսակ 3):

Չանդրադառնալով տնտեսական պատճառներին՝ ուղղակի ընդգծենք, որ 2001-2003 թվականների ընթացքում ամենահարուստ դեցիլի աշխատավարձի աճի տեմպը՝ 98 տոկոս, գերազանցել է ամենաաղքատ դեցիլի նույն ցուցանիշը՝ 11 տոկոս:

Գծապատկեր 8. Աշխատավարձի բաշխումն ըստ դեցիլների



Պատկերն ավելի է սրվում իրական աշխատավարձերի դեպքում, որի հաշվարկման համար կիրառվել է մեր կողմից հաշվարկված սղաճի բաշխումը (տե՛ս աղյուսակ 4):

²⁰ Տե՛ս «ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառումը 1999, 2001 և 2002 թթ.» վիճակագրական ժողովածու էջ 62 աղյուսակ 8: 2003 թվականի համար դիտարկվել են 2002 թվականի կշիռները:

Ամփոփելով հետազոտության այս մասը՝ կարող ենք եզրակացնել, որ սղաճի բաշխումը սրում է սոցիալական անհավասարությունը: Ավելին, դրան զուգահեռ անհավասարաչափ են բաշխվում նաև աշխատավարձերը և վերջին տարիներին միտումը խորանում է: Սղաճի բաշխման անհավասարությունը սրվում է ի հաշիվ սննդամթերքի և պետական կարգավորման ենթարկվող գների աճի:

Եզրափակում

ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների ամբողջական հետազոտության արդյունքների հիման վրա կատարված Հայաստանում բնակչության տարբեր սոցիալական խմբերի վրա սղաճի ազդեցության վերլուծության արդյունքում կարելի է հանգել հետևյալ հիմնական եզրահանգումներին.

- 1998-2003 թվականների սղաճը հիմնականում տեղի է ունեցել այն ապրանքախմբերի հաշվին, որոնք կարելի է համարել առաջին անհրաժեշտության: Գների աճը հիմնականում տեղի է ունեցել պետական սակագնային քաղաքականության ազդեցության արդյունքում: Չնայած այն հանգամանքին, որ ներմուծված ապրանքների գները շատ չեն փոխվել, այնուամենայնիվ 2003 թվականին արձանագրված հացամթերքների գների աճի փաստը թույլ է տալիս եզրակացնել, որ արտաքին գնային շուկերից տնտեսության խոցելիությունը բարձր է:
- Սղաճի բաշխումը սրում է սոցիալական անհավասարությունը: 2003 թվականին պաշտոնական 8.6 տոկոս սղաճի պայմաններում ամենահարուստ դեցիլի մոտ սղաճը կազմել է ընդամենը 6 տոկոս, իսկ ամենաաղքատ դեցիլի մոտ այդ ցուցանիշը հասնում է 25 տոկոսի:
- Ավելին, դրան զուգահեռ անհավասարաչափ են բաշխվում նաև աշխատավարձերը: 2001-2003 թվականների ընթացքում ամենահարուստ դեցիլի աշխատավարձի աճի տեմպը կազմել է 98 տոկոս, այն դեպքում, երբ ամենաաղքատ դեցիլի մոտ աշխատավարձի աճի տեմպը կազմել է 11 տոկոս:

Քավելված 1.

Աղյուսակ 1. Ծախսերի հիմնական հոդվածների մասնաբաժինը տնային տնտեսությունների միջին ամսեկան սպառողական ծախսերի կառուցվածքում (ըստ դեցիլային խմբերի 2001-2003 թվականների մեկ շնչի հաշվով):

Դեցիլ	Տարի	Սպառողական ծախսեր	Սննդամթերք	Ալկոհոլ	Ծխախոտ	Ոչ պարետնային ապրանքներ	Ծառայություններ
1	2001	100	80.3	0.3	6.1	4.6	8.7
	2002	100	79.6	0.2	5.5	5.6	9.1
	2003	100	79.6	0.2	5.5	5.6	9.1
2	2001	100	77.6	0.3	6.3	6.4	9.4
	2002	100	78.2	0.3	5.5	6.7	9.3
	2003	100	78.2	0.3	5.5	6.7	9.3
3	2001	100	76.4	0.4	5.1	7.6	10.5
	2002	100	76.6	0.3	5.7	7.1	10.3
	2003	100	76.6	0.3	5.7	7.1	10.3
4	2001	100	74.4	0.6	5.7	8.5	10.8
	2002	100	74.7	0.5	5.8	7.9	11.1
	2003	100	74.7	0.5	5.8	7.9	11.1
5	2001	100	71.2	0.6	6.1	9.8	12.3
	2002	100	73.1	0.6	6.6	8.7	11
	2003	100	73.1	0.6	6.6	8.7	11
6	2001	100	71	0.7	5.7	11.4	11.2
	2002	100	72.8	0.5	6	9.9	10.8
	2003	100	72.8	0.5	6	9.9	10.8
7	2001	100	68.5	0.7	6.3	12.9	11.6
	2002	100	69.9	0.7	6	11.2	12.2
	2003	100	69.9	0.7	6	11.2	12.2
8	2001	100	66.2	1	5.8	13.3	13.7
	2002	100	68.3	1	5.2	12.8	12.7
	2003	100	68.3	1	5.2	12.8	12.7
9	2001	100	60.6	1.2	5.4	16.1	16.7
	2002	100	64.3	1.2	5	15.5	14
	2003	100	64.3	1.2	5	15.5	14
10	2001	100	50.1	1.2	3.7	24	21
	2002	100	50.6	1.4	3.7	23.3	21
	2003	100	50.6	1.4	3.7	23.3	21

Աղյուսակ 2. Ծախսերի հիմնական հոդվածների մասնաբաժինը տնային տնտեսությունների միջին ամսեկան սպառողական ծախսերի կառուցվածքում ըստ դեցիլային խմբերի 2001-2003 թվականներին մեկ շնչի հաշվով: Հաշվի է առնված յուրաքանչյուր դեցիլի հացամթերքի սպառման կշիռը

Դեցիլ	Տարի	Սննդամթերք	Ալկոհոլ	Ծխախոտ	Ոչ պարտ-նային ապրանքներ	Ծառա-յություններ	Սննդամթերք առանց հացի	Հաց
1	2003	79.6	0.2	5.5	5.6	9.1	0.0	79.6
2	2003	78.2	0.3	5.5	6.7	9.3	33.3	44.9
3	2003	76.6	0.3	5.7	7.1	10.3	39.0	37.6
4	2003	74.7	0.5	5.8	7.9	11.1	41.5	33.2
5	2003	73.1	0.6	6.6	8.7	11	44.5	28.6
6	2003	72.8	0.5	6.0	9.9	10.8	47.1	25.7
7	2003	69.9	0.7	6.0	11.2	12.2	47.1	22.8
8	2003	68.3	1.0	5.2	12.8	12.7	49.5	18.8
9	2003	64.3	1.2	5.0	15.5	14	49.4	14.9
10	2003	50.6	1.4	3.7	23.3	21	41.7	8.9

Աղյուսակ 3. Աշխատավարձի աճի տեմպերն ըստ դեցիլների (տոկոսով)

	1	2	3	4	5	6	7	8	9	10
2001-2002	-7	35	45	23	31	48	43	34	39	66
2001-2003	11	61	73	47	57	77	71	60	67	98

Աղյուսակ 4. Իրական աշխատավարձի աճի տեմպերն ըստ դեցիլների (տոկոսով)

	1	2	3	4	5	6	7	8	9	10
2001-2002	-6	36	46	24	33	50	44	35	40	66
2001-2003	3	50	62	37	47	66	60	50	57	88

Չավելված 2. «Չացի խնդիրը»

2003 թվականի հունիսից միջազգային շուկաները սկսեցին արձանագրել հացահատիկի, մասնավորապես ցորենի գների աճ: Արդեն սեպտեմբեր ամսին 2003/2004 թվականի համար կանխատեսվում էր ցորենի համաշխարհային առևտրի ծավալների անկում մոտ 10 տոկոսով՝ պայմանավորված համաշխարհային արտադրության ծավալների նվազմամբ: Վերջինս իր հերթին հետևանք էր անբարենպաստ բնակլիմայական պայմանների:

Կանխատեսումներն ընդհանուր առմամբ իրականացան: Միայն Եվրոմիության երկրներում արձանագրվեց բերքի ծավալների 12.5 տոկոս անկում, Ռուսաստանում նույն ցուցանիշը կազմեց 32.7տոկոս²¹: Չայաստանը, հանդիսանալով փոքր և բաց տնտեսություն և առավել ևս ցորեն ներմուծող, չէր կարող չկրել ցորենի համաշխարհային շուկայում տեղի ունեցող զարգացումների ազդեցությունը:

Չայաստանում ցորենի ներքին սպառման կեսից ավելին ներմուծվում է: Չացամթերքների գները ներքին շուկայում 2003 թվականին մինչև տարեվերջ աճեցին 31.3 տոկոսով, որն ապահովեց 8.6 տոկոս տարեկան սղածի 5.7 տոկոսային կետը²²:

Չացի գների աճը Չայաստանում տարբեր կերպ անդրադարձավ բնակչության սոցիալական խմբերի վրա և առավելապես տուժեց չունեվոր խավը:


2003 թվականին ԱՊՉ որոշ երկրներում արձանագրվել է միջին տարեկան սղածի ավելի բարձր տեմպ քան 2002 թվականին (տե՛ս աղյուսակ 5): Մասնավորապես, սղածի ավելի բարձր տեմպ է արձանագրվել Տաջիկստանում, Մոլդովայում, Չայաստանում, Ղրղզստանում, իսկ Ռուսաստանում և Ադրբեջանում սղածը ցածր է եղել: Նշված երկրների առաջին խումբը հանդիսանում է ցորեն ներմուծող և համաձայն մեր

²¹ Տե՛ս United States Department of Agriculture “Grain: World Markets and Trade” February 2004

²² Տե՛ս 2004 թվականի ԳԳ ԿԲ դրամավարկային քաղաքականության ծրագիրը» էջ 10:

տեղեկությունների էական միջամտություն չի ցուցաբերել իր ներքին շուկայում ցորենի գների անցանկալի աճը զսպելու ուղղությամբ:

Գծապատկեր 9. Ցորենի ներքին թողարկման և ներմուծման ծավալները (հազ տոննա) և հացամթերքի գների ինդեքս (1998=100)



Ի տարբերություն դրան, Ռուսաստանը 2003 թվականին սահմանափակեց արտահանվող ցորենի ծավալները, իսկ Ադրբեջանը հացահատիկի ներմուծումն ազատեց ավելացված արժեքի հարկից:

Ընդհանրապես տարածված պրակտիկա է պետության կողմից հացահատիկի ինտերվենցիաները ներքին շուկայում, որը Ռուսաստանը ներկայումս փորձում է ակտիվորեն կիրառել²³: Այդ, և ընդհանրապես պարենային ապահովվածության սկատառումներից ելնելով, շատ երկրներ իրականացնում են հացահատիկի պահեստավորում (տե՛ս աղյուսակ 6²⁴):

²³ Տե՛ս "В России в ходе товарных интервенций, начинающихся 18.02.04, государство может продать 1.6 млн тонн зерна" ARMINFO 18.02.04

²⁴ Տե՛ս United States Department of Agriculture "Grain: World Markets and Trade" February 2004

Աղյուսակ 5. Սղաճն ԱՊՅ երկրներում

	2002	2003
ԱՊՅ անդամ երկրներ	14.8	11
Ադրբեջան	2.8	2.2
Հայաստան	1.1	4.7
Բելառուս	42.8	28.4
Վրաստան	5.7	4.8
Ղազախստան	6	6.4
Ղրղզստան	2.1	3.1
Մոլդովա	5.2	11.6
Ռուսաստան	16	12
Տաջիկստան	12.2	17.1
Ուկրաինա	0.8	5.2

Աղյուսակ 6. Հացահատիկի համաշխարհային պաշարները ըստ երկրների (հազ. տոննա)

	1999/00	2000/01	2001/02	2002/03	2003/04
	փաստացի	փաստացի	փաստացի	կանխատեսում	կանխատեսում
Ավստրալիա	3613	4537	7630	2938	3748
Կանադա	7299	9658	6729	5650	5600
Չինաստան	102943	91877	76588	60385	43185
Հնդկաստան	13080	21500	23000	15700	9750
Ռուսաստան	1200	1400	6479	5608	1608
Ուկրաինա	1800	450	2961	3252	427
Եվրոմիություն	11993	12728	10820	13401	7901
ԱՄՆ	25848	23846	21150	13374	15212
այլ	40108	39735	45605	45134	39832
ԸՆԴԱՄԵՆԸ	207884	205731	200962	165442	127263